

ՀԱՆՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2017 թ.-ի տարեկան բյուջեն երկրորդ եռամսյակում կատարվել է եկամուտների գծով՝ 91.0 %-ով, նախատեսված 59327.0 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 53994.9 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 14936.6 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 9604.5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 64.3 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 44390.4 հազ. դրամը տրվել են ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 44390.4 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100.0%:

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2017 թ.-ի երկրորդ եռամսյակում բյուջեն վարչական մասով նախատեսված էր 59327,0 հազ.դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 53994,9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 91,0 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 14936,6 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 9604,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 64,3 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 44390,4 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2017 թ.-ի երկրորդ եռամսյակում նախատեսված էր 4714,4 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 3976,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 84,3 %:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 185,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 137,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 74,3 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 6525,0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 2632,4 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 40,3 %:

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 597,2 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 493.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 82,6 %:

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2017թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 2915,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 2364,6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 81,1 %, այդ

թվում հողի վարձավճարը նախատեսված էր 1000,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմում է 853,6 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 85,4 %, գույքի վարձակալության պլանը նախատեսված էր 15,0 հազ. դրամ, փաստացի մուտք չի կատարվել, օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող վճարները նախատեսված է 1500,0 հազ. դրամ փաստացի մուտքը կազմում է 912,9, կատարման տոկոսը՝ 60,9 %, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված եկամուտները նախատեսված 900,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կատարվել է 547,0 հազար դրամ, կատարման կատարման տոկոսը՝ 60,8 %:

Պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նախատեսված էր 2026,0 հազ. դրամ, որը չի տրվել երկրորդ եռամսյակի ընթացքում, կատարման տոկոսը՝ 0 %:

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 53994.9 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 53994.9 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%:

2. Բյուջեի վարչական մասի ծախսերը

Բյուջեի վարչական մասի ծախսերը երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 59327,0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 47869,2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 80,7 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2017 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 34150,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 27989,0 կատարման տոկոսը՝ 82,0 %:

Զբոսաշրջության համար նախատեսված էր 100,0 հազ. դրամի ծախս, փաստացի ծախս չի կատարվել:

Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 7000,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 6000,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 85,7 %, այդ ծախսը կատարվել է համայնքի աղբահանությունը իրականացնելու համար:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության համար նախատեսված ծախսը կազմում է 1950,0 հազ. դրամ, փաստացի ծախսը 731.5 հազ. դրամ է կատարման տոկոսը 37.5 %, այդ թվում փողոցների լուսավորության գծով ծախսերը 731.5 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 37.5 %:

Առողջապահության համար նախատեսված էր 300.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել:

Կրթության համար 13251.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 12148.7 հազ.

դրամ, կատարման տոկոսը 91.7 %, այդ թվում նախադպրոցական կրթության համար նախատեսված էր 9876.0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 8998.7 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 91.1 %, արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված էր 4740.0 հազ. դրամ ծախս, որի փաստացի ծախսը կազմել է 2875,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 60.6%, կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների համար նախատեսված էր 275,0 հազ. դրամ ծախս, փաստացի կատարվել է 275,0 հազ. դրամ ծախս կամ կատարման

տոկոսը՝ 100,0%:

Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 1000,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 1000,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100,0%:

2) Ըստ տնտեսագիտական դասակարգման 2017 թ.-ի բյուջեն երկրորդ եռամսյակի ընթացքում կատարվել է

ա) աշխատանքի վարձատրության համար նախատեսված էր 22000,0 հազ.դրամ ծախս, փաստացի կատարվել է 20077.4 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 91.3%.

բ) ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսված էր 9813.0 հազ. դրամ ծախս , փաստացի կատարվել է 7631.1 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 76,0 %.

գ) ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ նախատեսված էր 26884.0 հազ.դրամ,փաստացի ծախսը կազմել է 19153.7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 77.8 %.

դ) սոցիալական ապահովագրության ծախսերը՝ այդ թվում բյուջեից այլ նպաստները նախատեսված էր 1000,0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 1000,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100.0%.

ե) այլ ծախսերը նախատեսված էր 130.0 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել 7.0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 5.4 %:

3. Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները առաջացել են տարեսկզբի ազատ մնացորդից՝5885,0 հազ դրամ և վարչական բյուջեից ֆոնդային բյուջե կատարվող հատկացման հաշվին,որը կազմում է 3626.0հազ. դրամ:

4. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2017թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 7911.0 հազ.դրամ ծախս,փաստացի ծախսը կազմել է 2935.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝37,1 %:

- 1) Վարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված էր 700 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել է 478,0 հազ դրամ կամ կատարման տոկոսը՝68.3 %:
- 2) Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար նախատեսված էր 5751,0 հազ. դրամ ծախս, կատարվել է ծախս 1974,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝34.3 %:
- 3) Ոչ նյութական ակտիվների գծով ծախսերը՝ նախատեսված էր 500 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել է 483,0 հազ դրամ կամ կատարման տոկոսը՝96,6 %:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Լ.ԶԱՎԱՐՅԱՆ